Ձև N 3
(Կադաստրի կոմիտե)

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ (ՏԱՐԵԿԱՆ) ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ					
Ծրագրի հերթական համարը	Նպատակը	Միջոցառումների անվանումները	Միջոցառումների իրականացման արդյունքները	Միջոցառումների չկատարման, այդ թվում՝ սահմանված ժամկետում, պատճառները	Ծանոթագրություն
1	2	3	4	5	6
330	Ինտեգրված կադաստրի ստեղծում	330.1. Հայեցակարգի մշակում և ներկայացում	ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 23-ի N 672-Լ որոշում	Միջոցառումը կատարված է:	
		330.2. Միջգերատեսչական հանձնաժողովի ստեղծում և աշխատակարգի հաստատում	ՀՀ վարչապետի 2019 թվականի հուլիսի 26-ի N 1006-Ա որոշում	Միջոցառումը կատարված է:	
		330.3. Տեխնիկական առաջադրանքի կազմում, որը արտացոլված է լինելու նաև ռազմավարական ծրագրում	Տեխնիկական առաջադրանքը կազմվել է 2019 թվականի սեպտեմբերին 13-ին:	Միջոցառումը կատարված է մասնակի, այն վերախմբագրման փուլում է:	
		330.4. Ինտեգրված կադաստրի ստեղծման ռազմավարական ծրագիր	Կառավարության որոշման նախագիծը մշակման փուլում է:	Միջոցառումը կատարված է մասնակի, այն լրամշակման փուլում է:	
331	Առցանց, ինքնաշխատ, անթուղթ անշարժ	331.1. Օրենսդրական դաշտի կարգավորում, որի արդյունքում կիրականացվեն իրավունքների գրանցման ու տեղեկատվության	2019 թվականի հուլիսի 1-ի «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ	Միջոցառումը կատարված է մասնակի: «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և	

	զույքի կադաստրի ներդրում	տրամադրման բարեփոխումներ գրանցման, տարածական տվյալների և արխիվի ոլորտներում	կատարելու մասին» ՀՕ-105-Ն ՀՀ օրենք, 2019 թվականի հուլիսի 1-ի ««Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-107-Ն ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 31-ի N 1487-Ն որոշում, ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 14-ի N 1601-Ն որոշում, ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 14-ի N 1586-Ն որոշում	լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը 2019 թվականի դեկտեմբերի 11-ի N ԱԿ//9461-2019 գրությամբ ներկայացվել է Արդարադատության նախարարություն՝ պետական-իրավական փորձաքննության: Կադաստրի կոմիտեի 2019 թվականի դեկտեմբերի 30-ի «ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ զույքի կադաստրի պետական կոմիտեի 2011 թվականի նոյեմբերի 17-ի N 320-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 389-Ն հրամանը, 2019 թվականի դեկտեմբերի 30-ի N ՍԹ//9947-2019 գրությամբ ներկայացվել է Արդարադատության նախարարություն՝ պաշտոնական հրապարակման:	
332	Հայաստանի Հանրապետու-թյան հասցեների միասնական ռեգիստրի ստեղծում և ներդրում	332.1. Հասցեների միասնական ռեգիստրի ստեղծման հայեցակարգի մշակում և Հայաստանի Հանրապետության կառավարության հավանության քննարկմանը ներկայացում	ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 10-ի N 553-Լ, որոշում, ՀՀ վարչապետի 2019 թվականի հուլիսի 26-ի N 1007-Ա որոշում	Միջոցառումը կատարված է:	
		332.2. Հայեցակարգից բխող օրենսդրական փոփոխությունների նախագծերի մշակում	Կառավարության որոշման նախագիծը դրված է շրջանառության մեջ:	Միջոցառումը կատարված է մասնակի: «ՀՀ տարածքում անշարժ զույքի հասցեավորման ու հասցեների միասնական ռեգիստրում գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման	

				նախագիծը դրված է շրջանառության մեջ:	
334	Հայաստանի Հանրապետության միասնական տարածագնահատ-ման նոր գոտևորման սահմանում և Հայաստանի Հանրապետությու-նում անշարժ գույքի հարկով 2020-2022 և 2023-2025 թվական-ների հարկման բազաների ձևավորում	334.1. Հայաստանի Հանրապետության միասնական տարածագնահատման նոր գոտևորման սահմանմամբ և «Անշարժ գույքի հարկման նպատակով շուկայական գնահատման կարգը սահմանելու մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ պայմանավորված միջոցառումներ	ՀՀ կառավարության 2019 թվականի հունիսի 20-ի «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» ՀՀ օրենքի նախագծին հավանություն տալու մասին» N 784-Ա որոշում, 2019 թվականի նոյեմբերի 19-ի «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» ՀՕ-225-Ն ՀՀ օրենք	Սահմանված ժամկետում՝ 2019 թվականի հունիսի 3-րդ տասնօրյակում, միջոցառման չկատարման պատճառը հետևյալն է. 334.1-րդ կետով սահմանված միջոցառումը հանդիսանում է «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ պայմանավորված միջոցառում, ուստի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի և «Անշարժ գույքի կադաստր վարող մարմնի կողմից անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի ու դրանց գնահատումների (վերագնահատումներ) վերաբերյալ տեղական ինքնակառավարման մարմիններին տեղեկություններ ներկայացնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերը «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելուց (ուժի մեջ է մտնում 01.01.2021 թվականին) հետո՝ մեկամսյա	

				ժամկետում կներկայացվեն ՀՀ կառավարության քննարկմանը:	
		334.2. Հայաստանի Հանրապետության հողերի և դրանց բարելավումների (շինությունների) գնահատումներ (վերագնահատումներ) և դրանց վերաբերյալ տեղեկությունների (2019 թվականի հուլիսի 1-ի դրությամբ հաշվառված տվյալներով) տեղադրում ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կայքէջում	Անշարժ գույքի վերագնահատումներ	Միջոցառումը կատարված է: Հայաստանի Հանրապետության համայնքների, բնակավայրերի գույքահարկի ու հողի հարկի 2020-2022 թվականների բազաները սահմանված կարգով մինչև 2019 թվականի սեպտեմբերի 1-ը տեղադրվել են Կադաստրի կոմիտեի կայքէջում:	
335	Հայաստանի Հանրապետության տարածքի երկրատեղեկատվական համակարգերի բազային շերտերի թարմացում	335.2. Վաղարշապատ քաղաքի պիլոտային քարտեզագրական հենքի ստեղծման աշխատանքներ	Վաղարշապատ քաղաքի տարածական տվյալների բազա և քարտեզագրական հենքի ստեղծման աշխատանքներն ավարտվել են 2019 թվականի դեկտեմբերի 30-ին:	Միջոցառումը կատարված է:	
337	Անշարժ գույքի գրանցման գործընթացների արդյունավետության բարձրացման նպատակով կառուցվածքային բարեփոխումների իրականացում	337.1 Տարածքային ստորաբաժանումների փոխարեն գործառնական ստորաբաժանումների ստեղծում, մասնավորապես անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման ստեղծում	ՀՀ վարչապետի 2018 թվականի նոյեմբերի 12-ի N 1500-Լ որոշում, ՀՀ կառավարության 2019 թվականի հուլիսի 18-ի N 918-Ա որոշում	Միջոցառումը կատարված է:	
		337.2. Տարածական տվյալների կառավարման ստորաբաժանման ստեղծում	Կառուցվածքային փոփոխություններ	Կոմիտեի չորս տարածքային ստորաբաժանումների միավորման արդյունքում գործառնական՝	

				տարածական տվյալների կառավարման, կադաստրային գործերի (արխիվի) համար նախատեսված նոր ստորաբաժանումների ստեղծման աշխատանքները դադարեցվել են՝ դրանց ստեղծման նպատակահարմարության հարցը որոշելու նպատակով:	
339	Գնահատման ոլորտի բարելավում և ընդլայնում	339.1. Գնահատման ոլորտի ընդլայնում և կայացում, մատուցվող գնահատման ծառայությունների որակի բարելավում, ինչպես նաև պետական և համայնքային բյուջեների եկամուտների աճ և ծախսերի տնտեսում	««Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ	Միջոցառումը կատարված է: Մշակվել և սահմանված ժամկետում ՀՀ կառավարությանն քննարկմանն է ներկայացվել «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, սակայն շահագրգիռ մարմինների կողմից ներկայացված մեծաքանակ առաջարկությունների ու առարկությունների պատճառով այն լրացուցիչ քննարկվում է, որից հետո կդրվի շրջանառության մեջ, վերջնական լրամշակվելուց հետո կներկայացվի ՀՀ կառավարության քննարկմանը:	
340	Գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի որակական և տնտեսական գնահատում	340.1. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի կադաստրային գնահատման մեթոդիկայի մշակման և մեթոդական ցուցումների ստեղծում աշխատանքներ	Գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի կադաստրային գնահատման մեթոդական ցուցումների ստեղծում	Միջոցառումը կատարված չէ: Աշխատանքներ չեն իրականացվել ոլորտի համապատասխան մասնագետ և անհրաժեշտ ֆինանսավորում չլինելու պատճառով:	

341	Հայաստանի Հանրապետության համայնքների գյուղատնտեսական նշանակության հողերի գույքագրում և կադաստրային քարտեզներում առկա անճշտությունների ուղղում	341.1. ՀՀ Արմավիրի մարզի համայնքների վարչական սահմանների, կադաստրային քարտեզներում առկա անճշտությունների ուղղման և գյուղատնտեսական նշանակության հողերի գույքագրման աշխատանքներ (պիլոտային)	Հարկման բազային ճշտում	Միջոցառումը կատարված չէ: Աշխատանքները պետք է իրականացվեին ՀՀ պետական բյուջեի և օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին, որի համար պահանջվում էր 326 մլն ՀՀ դրամ: Չնայած աշխատանքների կատարման իրավունքը սահմանված կարգով կայացած մրցույթում շահել էր Կոմիտեի «Գեոդեզիա և քարտեզագրություն» ՊՈԱԿ-ը, սակայն այդ աշխատանքները չեն իրականացվել համապատասխան ֆինանսավորում չլինելու պատճառով:	
346	Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի ըստ նպատակային նշանակության հողերի կադաստրային գների սահմանում	346.1. «Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի ըստ նպատակային նշանակության հողերի կադաստրային գները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունում	ՀՀ կառավարության 2019 թվականի ապրիլի 11-ի N 403-Ն որոշում	Միջոցառումը կատարված է:	
347	Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ հաշվետվության (հողային հաշվեկշռի) կազմում	347.1. «Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ յուրաքանչյուր տարվա հաշվետվության (հողային հաշվեկշռի) մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի փաթեթի կազմում և սահմանված կարգով ներակայացում Հայաստանի	ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի N 1379-Ն որոշում	Միջոցառումը կատարված է:	

		Հանրապետության կառավարություն			